

կնիք

(Յնի անձնիք բիւզանդեան սճող, ձախը Աւետարան բռնած, աջը կ'օրհնէ: Երկու կողմը՝ ՅՍ ՔՍ, ասոր շուրջը «(Է) ՅԻ ՔԻ ԾՌԻ ԳԻՈՐԳ ՎՐԴՊՏ Եւ ԵՊԿՊՍ 1208» (= 1759):

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Գէորգ Եպիսկոպոս յեւդոկիացի: Յայտ լիցի յամենից ակնարկողաց վկայականիս այսորիկ հաստատնոյ, զի յամի փրկութեան մերոյ 1764 շնորհիւ Տեառն գտանեցեալ ի վրաստանու քաղաքս Ախցխայ, Հրամանաւ Ամենապատուոյ Հօր Լէոնարդոսի Վեթէրբացւոյ ի կարգէ Քափուշինաց Առաքելական Միսիօնարի, եւ Գերապայծառ եւ Գերյարգելի Տեառն Տեառն Վլասիոսի կոստանդնուպօլսի Արհիեպիսկոպոսի եւ Առաքելական վեքարի փոխախանորդի Ախցխու նահանգիս, ի յունիս ամսոյ ԺԹ աւուր շաբաթու՝ զկնի հռչակման ամենասուրբ պատարագի ի յեկեղեցին սուրբ Խաչի ետու զփոքր շորս աստիճանս կօրեցի Ազնուազարմ Աւթանտիլեանց Փարսատանի որդւոյ Աւթանտիլին, եւ կոչեցի զանուն նորա Ստեփաննոս. եւ ի նոյն Ամսոյ, որ էր Աիրակէ ի նմին եկեղեցւոյ հանդիսաւոր պատարագաւ ձեռնադրեցի զնա կիսասարկաւագ եւ Աւագ սարկաւագ, իսկ ի ԻԷին վերոյսացեալ Ամսոյ, որ էր նմանատիպ օր կիրակէ ի մէջ հանդիսաւոր հռչակման Աստուածայնոյ Պատարագին ի նոյն եկեղեցին օծի զնա Քահանայ: Որոյ Տէր տացէ շնորհ եւ իմաստութիւն առ ի լինել օգուտ Սրբոյ Եկեղեցւոյ ջանալով փրկութեան Հօգւոց Հաւատացելոց, եւ լինել արդիւնաւորիչ ընկալեցելոյ քանքարին, որով եւս արժանացի կոչիլ ի Տեառնէ, Ազնիւ ծառայ բարի եւ հաւատարիմ: Ամէն. Շտա-